


« ԹՈՂ ՏՈՒՔ ՄԱՆՐ ՏՂԱՅՔԸ ՈՐ ԻՆՁԻ ԳԱՆ։» Ղուկ. ԺԸ. 16։

ՀԱՏՈՐ ԺԷ. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԱՊՐԻԼ 1, 1888 ԹԻՒ 4

## ՊՈՐՆԷՈՅ

Եթէ Աւստրալիա համարինք ցամաք երկիր, Պորնէոյ աշխարհիս ամենէն մեծ կղզին է, Նոր Կուինէայէ ետքը։ Երկրիս հասարակածը զՊորնէոյ կը բաժնէ երկու գրեթէ հաւասար մասանց, և սակայն անոր կլիմային ջերմութիւնը շատ սաստիկ չէ։ Կղզւոյն մէջ կ'երկննան լերանց երկու բարձր շղթաններ, և կը գտնուին շատ գետեր։ Պորնէոյ ևս առաւել հրապուրիչ է իբրև տեղի բնակութեան, սա պատճառաւ որ ունի հանքային մեծ հարստութիւն, և հողն է բարեբեր։

Կը հաշուուի թէ այս կղզին ունի 3 միլիոնի մօտ բնակիչ, որոց մէկ մասն է Հոլանտացւոց հպատակ, և մէկ մասն է ինքնագլուխ։ Բնիկները կը կոչուին Տիաք, և բաց ի նոցանէ կան նաև շատ մը Մալայեանք և Չինացիք։ Պատկերին մէջ Տիաք պատերազմիկ մը կը կենայ մեր առջև, իւր զրահով որ շինուած է մետաղեայ իրար հիւսուած օղակներով. կռնակն ունի վահան մը, և ուրիշ վահան մը՝ իւր ձեռքը։ Կ'ըսուի թէ այս Տիաքներուն բարեկամութիւնն է շատ ջերմ, և թշնամութիւնը՝ շատ դառն։ Անոնք առաջ սովոր էին գլխատելով սպաննել իրենց ձեռքն ինկող գերիները, սա այլանդակ հաւատքով թէ այն գլխատուողները իրենց ծառաները պիտի ըլլան հանդերձեալ աշխարհին մէջ։ Կռապաշտ են բայց չունին քուրմեր, սակայն կը զոհեն կենդանիներ և կը մատուցանեն պտուղ իբրև մաս իրենց կրօնքին։ Պորնէոյի մէջ կան երկու Մահմետական Թագաւորութիւններ որոց իշխողք կը կոչուին Սուլթան։


ՏԻԱՔ ՊԱՏԵՐԱԶՄԻԿ ՄԸ

Առաջները Պորնէոյի նաւահանգիստք հռչակաւոր էին իբրև թաքստոց (ծածուկ տեղ) Մալայեան ծովապա-

տակներու, և դժբաղդ շատ նաւաստիք անողորմաբար սպաննուած են անոնցմէ. Բայց Անգղիացիք սաստիկ պատիժ տուին ծովու այս աւազակներուն, և ապահով վիճակի մէջ դրին Պօրնէօյի մերձակայ ծովերուն նաւարկութիւնը։

## ՅԻՄԱՐԵՑՈՒՆԵԼ

Մր. Քէրնուէլ, արբեցութեան դէմ բանախօսութիւններ ընող անձը, ըսաւ մտերս,

Գիտցուք թէ ըլլայի մոգ և ազդարարէի խոշոր ծանուցագրով թէ զարմանալի խաղ մը պիտի ներկայացունեմ, կ'ըսեմ թէ կրնամ այս կերպով քանի մը վայրկենի մէջ յիմարեցունել մտացի մարդը։ Խաղին գիշերը կու գայ, եռանդնոտ հանդիսատեսք կը լեցուին սրահին մէջ. երևելի քաղաքացւոց խմբակ մը կը նստի բեմին վրայ։ Քանի մը խօսք զրուցելէ ետքը հրաւէր կ'ուղղեմ հանդիսատեսներուն որ անոնցմէ ով որ կ'ուզէ թոյլ տայ որ իւր վրայ կատարուի փորձը. և պայծառ դէմքով, աշխոյժ և մտացի տղայ մը կ'ելլէ իւր մօր քովէն և կու գայ յառաջ։ Կը նստեցունեմ զնա աթոռի մը վրայ, և քանի մը անգամ անոր գլխին վրայէն կ'անցունեմ ձեռքս։ Հիմա անոր աչուըները կ'աղօտանան և կը պաղին, շըրթունքը կը զատուին իրարմէ և ապուշ ժպիտ մը կը յայտնեն, և բերնէն թուք և լորձունք կը վազցունէ ճիշդ յիմարի նման։ Հանդիսատես խումբը շատ գոհ կը մնայ։ Կ'ըսեն անմիջապէս, «Այս խաղը կատարելապէս յաջողեցաւ, տէր. նշանաւոր կերպով կատարուեցաւ. բայց հիմա դարձեալ տե՛ղը բեր այս փոքրիկին խելքը, մայրը մեծապէս անհանգիստ է։» «Ինչո՞ւ համար,» կ'ըսեմ, «ես երբեք չխոստացայ զայդ։» Մայրը կը նուաղի։ «Տէր, հիմա կատակ ընելու ժամանակ չէ,» կ'ըսէ խումբը խիստ ձայնով։ «Բայց ես չեմ կրնար տեղը բերել անոր խելքը,» կ'ըսեմ, «ես կրնամ միայն խենդեցունել զնա։ Տըղան յիմարանոց դնելու են։» Հաւանակա՞ն է որ ինձ թոյլ տրուէր աւարտել բանախօսութիւնս։ Կեանքս ապահո՞վ էր միթէ այն զայրացած մարդոց ձեռքը։ Բայց ճիշդ այս է ինչ որ Արբեցութեան դևը կ'ընէ ամէն օր ձեր մէջ։

## ԷՐԷՊՈՒՍ ԵՒ ԹԷՐՐԸՐ ԼԵՐԻՆՔ

Տղայոց Աւետաբերի այս տարուան փետրուարի թուոյն մէջ դրինք վեսուվ լերան պատկերը, և համառօտիւ պատմեցինք այդ հռչակաւոր հրաբուխին պատճառաւ կեանքի և ստացուածոց կորստեան վրայ։ Ահա հօս կը տեսնէք վեսուվի երեք անգամ բարձրութիւնն ունեցող ուրիշ հրաբուխի մը պատկերը, որոյ կատարէն կ'արձակուի բոց և ծուխ, և անտարակոյս անոր կողերէն վար կը հոսի յաճախ լավա, և սակայն հաւանականապէս բնաւ փոքրագոյն վնաս մը անգամ ըրած չէ և ոչ մէկուն։ Ըսեմ ձեզ թէ ինչ է պատճառը։



ԷՐԷՊՈՒՍ ԵՒ ԹԷՐՐԸՐ ԼԵՐԻՆՔ

Կը տեսնէք որ լեռը ձիւնով ծածկուած է գագաթէն մինչև ստորոտը, և որ՝ ծովուն մէջ կը տատանին սառի կտորներ։ Անոնց մէկուն վրայ փոկ մը նստած է և չվախնար նաւակին մէջ գտնուող մարդոցմէն, թէպէտ անոնցմէ մին կը պատրաստուի զարնել զնա, վասն զի փոկը անկէ առաջ մարդ բնաւ չէ տեսած և չէ սորված վախնալ անոնցմէ։ Այս հրաբուխը կը գտնուի հեռաւոր տեղ մը, այն է Հակարջային Ովկիանոսին մէջ, և միայն 12 ½ աստիճան հեռի է Հարաւային Բևեռէն։ Այնպէս ցուրտ և անբերրի է որ մարդ չբնակիր հոն, և այս է պատճառը թէ ինչու համար ոչ ոք վնասուած է հրաբուխէն։

Այս լերան անունն է Էրէպուս, և անոր մօտ կը գտնուի աւելի փոքր լեռ մը Թէրրըր անուն։ Ասոնք գտնուեցան ասկէ ճիշդ 50 տարի առաջ Անգղիացի նաւավարաց ձեռամբ որք տըւին անոնց իրենց երկու նաւերուն անունները որովք կը ճամբորդէին։

Թերևս խորհիք թէ աղէկ կ'ըլլար եթէ բոլոր հրաբուխք Հակարջային կիսագունտին վրայ գտնուէին այնպէս որ կարող չըլլային վնաս հասցունել մարդու. բայց այդ քիչ օգուտ պիտի ընէր ցորքան հիւանդութիւնք, վայրի գազանք և փոթորիկք կը մնան։ Աշխարհս նեղութեան աշխարհ է, վասն զի մեղաց աշխարհ է։ Աւելի շահաւոր պիտի ըլլար եթէ կարող ըլլայինք ղրկել բոլոր չար մարդիկը Հակարջային երկիր մը ուր կարող պիտի չըլլային աւրել ուրիշները։ Եւ դուք գիտէք թէ Աստուածաշունչը կը խօսի մեզ օրհնեալ երկրի մը վրայ ուր ոչ մեղք կայ և ոչ նեղութիւն, չարչարանք։ Եթէ ունինք հոն տուն և գանձ, մեզ պիտի չկրնան վախցունել ոչ հրաբուխք և ոչ որ և իցէ ուրիշ բան։

## ԱՄԵՆԷՆ ԵՐՋԱՆԻԿ ՏՂԱՆ

Ձեր ճանչցածներուն մէջ ո՞րն է ամենէն երջանիկ տղան։ Ըսել կ'ուզեմ ո՞վ իւր ժամանակը ուրիշ տղոցմէ աւելի հաճոյքով կ'անցունէ։ Ա՞յն որ ամենէն շատ ունի խաղալիկներ, կամ ա՞յն որ ամենէն լաւ հանդերձներ կը հագնի։ Տեսնենք։

Ժամանակաւ կար թագաւոր մը որ ունէր փոքրիկ տղայ մը և կը սիրէր զնա։ Տուաւ անոր բնակելու գեղեցիկ սենեակներ, նաև պատկերներ, խաղալիկներ և գիրքեր։ Տուաւ անոր փոքրիկ ձի մը, նաւակ մը լճակի մը

վրայ, և ծառաներ ։ Բռնեց վարժապետներ որ սորվեցունեն անոր գիտութիւն որպէս զի բարի ըլլայ և մեծ ։ Բայց այս ամէն բաներով հանդերձ փոքրիկ իշխանը չեղաւ երջանիկ ։ Դէմքը խոժոռ էր ուր որ երթար և միշտ կ'ուզէր ունենալ ինչ որ չունէր ։ Վերջապէս օր մը իմաստուն մարդ մը եկաւ պալատը ։ Տեսնելով տղան՝ ըսաւ թագաւորին, “Ես կրնամ տղադ երջանիկ ընել ։ Բայց պէտք է որ վճարես վարձքս գաղտնիքը ըսելուս համար ։” “Շատ լաւ,” ըսաւ թագաւորը, “ինչ որ ուզես կու տամ քեզի ։”

Իմաստունը տարաւ տղան առանձին սենեակ մը ։ Ճերմակ նիւթով մը բան մը գրեց թղթի կտորի մը վրայ։ Յետոյ տուաւ տղին ճրագ մը և ըսաւ անոր որ վառէ զայն և բռնէ թղթին ներքևը, և նայի թէ կրնա՛յ կարդալ ։ Այնուհետև լռիկ մը գնաց իւր ճամբան բնաւ վարձ չպահանջելով ։ Տղան ըրաւ ինչ որ իրեն պատուիրեց իմաստունը, և այն թուղթին վրայ գրուած ճերմակ գիրերը գեղեցիկ կապոյտ գոյն ստացան ։ Գրուածն էր այս .

“Ամէն օր բարիք մը ըրէ ուրիշի մը ։”

Փոքրիկ իշխանն ի գործ դրաւ այս գաղտնիքը, և թագաւորութեան մէջ ամենէն երջանիկ տղան եղաւ ։

Կը յուսամ թէ դուք ալ, սիրելի տղաք, պիտի փորձէք այս իմաստունին գաղտնիքը ։

## ՋՐԱՐԱՆՔ

Թէպէտ խաղարաններու և ուրիշ գէշ տեղերու տէրերը շատ անգամ կը ջանան զանոնք հրապուրիչ ընել, կարծեմ մենք ամէնքս ալ ունինք սա զգացումը թէ չար խորհուրդները չեն վայլեր մաքրութեան և գեղեցկութեան մէջ։ Ապականութիւն և մեղք բնականապէս կ'երթան ի միասին ։ Աղէկ է որ մեր տուներն ընենք մաքուր և հրապուրիչ որչափ որ կրնանք ։ Ջենք ուզեր քաջալերել սակայն չափազանց ծախքեր ընելը՝ գնելու համար մեծագին կահ կարասի, բայց գեղեցկութիւն և զարդ շատ անգամ կարելի է ձեռք բերել քիչ ծախքով ։ Ծանրագին գորգեր (խալը) և մետաքս վարագոյրներ ստանալ շատերուն կարողութենէն վեր է, բայց կրնան անոնք ունենալ թաղարներով ծաղիկներ, և դեղձանիկ թռչուն (գանարեա) մը որ կ'երգէ քաղցրաձայն և ունի պայծառ փետուրներ ։ Բնական գեղեցկութիւնն ամենէն աւելի հաճոյ է աչաց, մանաւորապէս այնպիսին որ իւր հետ կապակցեալ ունի կեանք և աճումն ։

Առտնին (տնական) զարդուց ամենէն գեղեցիկներէն մին է Ջրարանը, նման մեր պատկերին մէջ տեսնուածին ։ Աւելի աղէկ կ'ըլլայ այն եթէ շինուած ըլլայ ուղիղ կամ տափարակ կողմերով, վասն զի բոլորակ ապակին իւր մէջ գտնուած առարկաները ծռմռկած կը ցուցնէ ։ Կը յիշենք հատ մը զոր տեսանք տան մը մէջ ուր այցելութեան գացինք և որուն տէրը բնաւ հարուստ մարդ մը չէր ։ Ջրարանին պատուանդանն էր մարմարիոնէ, և անոր չորս կողմերն էին թանձր ապակի տախտակներէ որ ագուցուած էին մետաղեայ շրջանակաց մէջ ։ Անոր մէջ կային քարեր և խեցեմորթ կենդանիներ, հանդերձ փոքրիկ ձուկերով որ կը խաղային կը կայտռէին անոնց մէջերը ներս և դուրս ։ Ծովային բոյսեր ալ աճած էին անոր մէջ, և ձըկունք և բոյսք կ'օգնէին իրարու ողջ և անապական մնալուն, վասն զի ձըկունք կը մաքրէին ջուրը յօգուտ տունկերուն, և տունկերը՝ յօգուտ ձկանց ։ Շատ զուարճալի էր տեսնել ձուկերը որ կը լողային աստ և անդ, և տեսնել որ իբրև կերակուր իրենց նետուած փշրանքները կը բռնէին արագութեամբ ։



ՋՐԱՐԱՆ

Թերևս մեր փոքրիկ ընթերցողներէն քիչերը շատ դիւրութիւն պիտի ունենան տէր ըլլալ Ջրարանի մը, բայց կը թելադրենք անոնց ջանալ և խորհել թէ ի՛նչ կրնան ընել որ իրենց տուներն ըլլան աւելի գեղեցիկ ։

## ԱՐԾԻՒ

Արծիւք որ բոլոր թռչնոց մէջ ամենէն ազնիւն են, կը գտնուին աշխար-

հիս այլ և այլ շատ կողմերը։ Բնակութիւն հաստատած են կեդրոնական և Հիւսիսային Եւրոպա, Միջերկրական Ծովուն եզերքները, Սուրիա և Արաբիա, բայց միայն այնպիսի տեղեր ուր կը գտնուին ընդարձակ անտառներ ունեցող լեռներ կամ բարձր ժայռերու սարեր։ Արծուի քանի մը տեսակներ կը գտնուին նաև երկու արևադարձներուն մէջ, ինչպէս, օրինակի համար, քնարաւոր կոչուած արծիւը, որոյ բնակավայրն է Արևադարձներուն մէջ գտնուող Ամերիկայի խոնաւ և ցած տեղերը, և Ափրիկէի՝ ձկնորս կոչուած արծիւը։

Քնարաւոր արծիւը հասարակ արծիւէն մեծ է։ Ճանապարհորդաց խօսքին նայելով կը թուի թէ նա չգիտեր վախնալ որ և իցէ բանէ։ Տորպլինի անուն բնախօսը կը պատմէ թէ օր մը մինչ կ'իջնէր նաւակով Պոլիվիոյ մէկ գետէն քանի մը Հնդիկներու հետ, սաստիկ վիրաւորեցին քնարաւոր արծիւ մը իրենց նետերով, այնպէս որ վար ինկաւ ճիւղէն որոյ վրայ զարնուած էր։ Հնդիկք նաւակէն դուրս ելլելով վազեցին գացին հոն ուր թռչունը կը պառկէր, զարկին գլխուն, փետտեցին անոր թևերուն փետուրները և մեռած համարելով բերին նաւակը։ Բայց ահա քնարաւորը արթնցաւ իր թմրութենէն և կատաղաբար յարձակեցաւ զինք հալածողներուն վրայ։ Նետուելով Տորպլինի վրայ, ծակեց անոր ձեռքը կրկին և կրկին իր միակ մագիլով որ անվնաս մնացած էր, մինչ միւս սրունքին ջախջախեալ մագիլներով կը պատառէր նորա բազուկը որոյ վրայ նոյն ժամանակ կը յարձակէր իր կտուցով։ Երկու մարդիկ հազիւ հազ կարող եղան ազատել բնախօսը այն կատաղի թռչնոյն ձեռքէն։

Արծիւք մսակեր են, և իրենց բռնած կենդանիները կը տանին իրենց բոյները, զորս կը շինեն առանձին լերանց դագաթները։ Բռնուած կենդանիք կը զանազանին մեծութեամբ՝ զիրենք որսացող արծիւներուն տեսակին համեմատ։ Նապաստակք, կաքաւք, արագիլք, մողէսք, կրիայք, օձք, և աւելի մեծ կենդանիք, ինչպէս՝ այծեամներ, կը տարուին օդին մէջէն արծուին բոյնը։

Ուրիշ արծիւք կան որ գլխաւորապէս կը սնանին ձուկներով։ Կ'ըսուի թէ Հիւսիսի ծովային արծիւը ճարտար հնարքով կը յաղթէ, մինչև իսկ եզները։ Անոր վրայ գրողները կ'ըսեն թէ ինչ բնութիւններ կը ցուցնէ նա Նորվեկիոյ կղզիներուն մէջ. «Արծիւը կը նետէ զինք ծովուն ալիքներուն մէջ, կ'ելլէ դուրս իր թևերը թըրջած, կը թաւալի ծովեզրը մինչև որ բոլորովին ծածկուի աւազով և խիճերով։ Այնուհետև կ'ելլէ օդը և կը սուրայ իր զոհին վերևը։ Ճիշդ անոր գլխէն վեր կը թօթվէ իր փետուրները, այսպէս լեցունելով աւազ և խիճ անոր աչաց մէջ, և կ'աւելցունէ անոր երկիւղը կրկին և կրկին հարուածելով զայն իր թևերով։ Եզը ինչ ընելիքը չգիտնալով յիմարի պէս կը վազէ արագ աստ և անդ, և ի վերջոյ կ'իյնայ կը փռուի գետին յոգնած և պարտասած, կամ կը նետէ զինք սեպաձև ժայռերուն վրայէն վար, և ահա արծիւը հանդարտօրէն կտոր կտոր կը պատառէ զայն։»

Շատ ակնարկութիւններ կան արծուին վրայ թէ՛ Սուրբ Գրոց մէջ և թէ՛ բանաստեղծութեանց մէջ, և շատ վեհապետք ընտրած են այս վեհ թռչունն իբրև նշան իրենց արքայական իշխանութեան։

### ԳՈՐԾԻ ՄԷՋ ՀՈԳԱԾՈՒԹԻՒՆ

«Ինչոր երբէք կ'արժէ ընել, կ'արժէ լաւ ընել,» է ընտիր առած մը և արժանի հետևելու ամէն դեռահաս անձանց և մանկանց։ Այս առածին գործադրութիւնը ոչ միայն կը հաստատէ հոգածութեան և արագ և ճիշդ գործելու ունակութիւնը, այլ կը դնէ լաւ հիմ մը կենաց մէջ յաջողութիւն ունենալու։ Ամերիկայի Սինսիննաթի քաղաքին մօտ բնակող երևելի դատաւոր մը ուզեց իւր տան քով կոշտ ցանկ մը քաշել տալ, ուստի կանչել տուաւ հիւս մը։

«Կ'ուզեմ նորոգել տալ այս ցանկը,» ըսաւ, «որպէս զի արջառները ներս չմտնեն։ Քանի մը հատ անտաշ տախտակներ կան, անոնք գործածէ։ Ցնէն չերևիր ցանկին այն կողմը, ուրեմն պէտք չէ որ ժամանակ կորսընցունես զանոնք մաքրելու հարթելու աշխատելով։ Քեզի կը վճարեմ մէկ ու կէս տոլար միայն։»

Բայց երբ յետոյ եկաւ դատաւորը տեսնել ցանկը, գտաւ որ տախտակները յղկուած հարթուած և իրենց տեղերը գամուած էին ամենայն մաքրութեամբ և ճաշակաւ։ Դատաւորը կարծելով թէ հիւս երիտասարդը այնպիսի աշխատութիւն տուած էր ցանկին որպէս զի շատ ստակ ուզէր, ըսաւ բարկութեամբ. «Ես ըսի քեզի թէ այս ցանկը որթատունկով պիտի ծածկուի։ Փոյթ չէ ինձ թէ ինչ երևոյթ կ'ունենայ։» «Այո, գիտեմ,» ըսաւ հիւսը։ «Ո՞րչափ ստակ կ'ուզես աշխատութեանդ փոխարէն,» հարցուց դատաւորը։ «Մէկ ու կէս տոլար,» ըսաւ մարդը, մինչ ուրագը և այլն իր ուսը կը զարնէր։ «Ինչո՞ւ համար այդչափ աշխատութիւն տուիր ատոր եթէ աւելի ստակ պիտի չպահանջէիր։» «Գործին համար, Տէր։» «Բայց ոչ ոք պիտի տեսնէ անոր համար կրած աշխատութիւնդ։» «Բայց ես պէտք է որ տեսնեմ թէ այդպիսի աշխատութիւն տրուած է անոր։ Ո՛չ, ես աւելի ստակ չեմ ընդունիր, պիտի ընդունիմ մէկ ու կէս տոլար միայն։» Եւ առաւ մէկ ու կէս տոլարը և մեկնեցաւ գնաց։

Տասը տարի ետքը դատաւորը պէտք ունեցաւ հասարակաց կարգ մը հոյակապ շէնքերու շինութեան համար ճարտարապետ մը գտնել։ Հռչակաւոր բազում ճարտարապետք իրենքզիրենք առաջարկեցին, բայց անոնց մէջէն միոյն դէմքը միայն գրաւեց դատաւորին ուշադրութիւնը։ Այն էր յիշեալ ցանկը շինողինը։

«Գիտէի,» ըսաւ յետոյ դատաւորը, երբ կ'ընէր այս պատմութիւնը, «թէ նա միշտ ընտիր և հաւատարիմ գործ միայն կը գործէր, ուստի յանձնեցի գործն անոր, և անով եղաւ հարուստ մարդ մը։»

### ՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՆԵԼՈՒԿԻ

Անցեալ Մարտ ամսոյ հանելուկին պատասխանն է,

«Յարմարութեամբ ըսուած խօսքը՝ արծաթէ զարդերու մէջ դրուած ոսկիէ խնձորներու կը նմանի։» Առակ. ԻԵ. 11։ Բանալի եղող բառերն են, Ասուերոս, Սեդրաք, Մըջիւն, Յակոբոս, Ոնեսիմոս, Ագար, Եզրիկամ, Ծիածան, Մարախ, Օմէր, Թթուածին, Էրէ, Խանձարուր, Եւ, Ը։

Լուծեցին

Կ. Պոլիս. . —Յակոբճան Կ. Ճրագեան, Համբարձում Գ. Մարկոսեան, Յարութիւն Կ. Ներկարարեան, Եւնիկէ Յարութիւնեան, Րօզա Ա. Կոստանդեան, Լէմուէլ Կոստիկեան, Արշաւիր Գ. Քէմալեան, Գ. Ս. Գաբրիէլեան։ Ատաբազար, —Գէդէոն Գ. Կիւրեղեան, Օֆէլիա Ս. Ներկարարեան, Բենիամին Մ. Շաքարագործեան, Զարմիկ Ա. Աւետիսեան, Աննիձա Ա. Պուղտանեան, Միրիճան Ղ. Զէթէճեան, Վահան Յ. Գավալճեան, Զարուհի Ս. Գաւալճեան։ Պարտիզակ, —Ռուբէն Ե. Ալթունեան, Միքայէլ Խ. Մինասեան, Վիքթորիա Մ. Սըլիեան։ Իօտէմիշ, —Յովհաննէս Ս. Տայեան, Եւնիկէ Հ. [illegible]։

Ամերիկայի Միսիոնարաց ընկերութեան կողմէն,
Արտօնատէր Ջ. Գ. ԳՐԻՆ
Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ
Ֆինճանճըլար եօգուշու, [illegible] խան։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ